

SEIU Տեղական 2015 Միության Առաջնորդական Զորացման Վերաբերյալ Որոշում

Քանի որ, SEIU Տեղական 2015 Միությունը հանդիսանում է պետության ամենախոշոր միություններից մեկը, որն իր մեջ ընդգրկում է Կալիֆորնիայի 400,000 երկարատև խնամքի աշխատողներին, և

Քանի որ, SEIU Տեղական 2015 Միությունը հանդիսանում է Կալիֆորնիայի խնամակալների, կանանց, գունավոր մաշկ ունեցող և ներգաղթյալ աշխատավորների ամենախոշոր կազմակերպությունը, և

Քանի որ, SEIU Տեղական 2015 Միությունը հանդիսանում է Կալիֆորնիայի Երկարատև Խնամքի աշխատավորների կազմակերպություն, որն ի հայտ կբերի երկարատև խնամքի աշխատողների, նրանց ընտանիքների և համայնքների հավաքական ուժը, կկիրառի տեխնոլոգիաների ուժը և կիրականացնի լայնածավալ շարժում, որպեսզի վերացնի անարդար ստատուս քվոն և ապահովի հարատև վերափոխում՝ բոլորիս համար առավել արդար հասարակություն ստեղծելու նպատակով, և

Քանի որ, SEIU Տեղական 2015 Միությունն իր գործունեությունն ապահովում է՝ հանդիսանալով ներառող կազմակերպություն, վերացնելով ռասիստական համակարգերն ու կառույցները, ընդարձակելով մեր դեմոկրատիան, համագործակցելով համայնքային գործընկերների հետ և ապահովելով, որպեսզի բոլորն ունենան միություն կազմավորելու իրավունք, և

Քանի որ, SEIU Տեղական 2015 Միությունը իր ուժը գործադրում է, որպեսզի կարողանանք իրականացնել որակյալ աշխատատեղեր ստեղծելու մեր տեսլականը, որոնք կապահովեն կենսական աշխատավարձեր, կենսաթոշակային ապահովություն, առողջապահություն, հարգանք և որակյալ կյանք մեր համայնքներում, որոնք կներառեն միություն կազմավորելու իրավունք բոլորի համար, որակյալ երկարատև խնամքի հասանելիություն ծերերի և հաշմանդամություն ունեցող մարդկանց համար, մատչելի որակյալ առողջապահություն, բնակարաններ, անվտանգ թաղամասեր, կրթական հնարավորություններ և ռասայական արդարություն, և

Քանի որ, SEIU Տեղական 2105 Միությունն առաջնորդվում է հետևյալ արժեքներով՝

Առաջնորդությամբ, որը դրսևորվում է, երբ մենք կազմակերպվում ենք մեր տեսլականի շուրջ, ստանձնում ենք անվախ գործողություններ, կառուցում ենք բազմազանությամբ գորացված հարաբերություններ և ներգրավող թիմեր, պատասխանատվություն ենք կրում արդյունքների հանդեպ, հանձն ենք առնում դրսևորել էթիկական չափանիշներ և կուլտուրա, և ոգեկոչում ենք ուրիշներին սովորել ավելին, երազել ավելի մասին, անել ավելին և դառնալ ավելին:

Կարեկցանքով, որը դրսևորվում է, երբ մենք տեղ ենք հատկացնում մեր սրտերում և մտքերում ուրիշների տառապանքն ու խնդիրները կիսելու համար, ինչպես նաև փորձում ենք գտնել լուծման եղանակներ:

Հգորացմամբ, որը դրսևորվում է, երբ յուրաքանչյուր աշխատող հնարավորություն է ստանում ուսումնասիրելու իրենց առաջնորդական հնարավորությունները և դա իրականացնել հանուն ուրիշների:

Պատասխանատվությամբ, որը դրսևորվում է, երբ մենք ամեն օր ստանձնում ենք ինքնա-արտացոլում, տնօրինություն և պատասխանատվություն ուրիշների խոսքի, գաղափարների և գործողությունների նկատմամբ:

Թափանցիկությամբ, որը դրսևորվում է, երբ մենք ապահովում ենք, որպեսզի բոլոր մակարդակներում տարվեն բաց գրույցներ և քաջալերվի հարատև վստահություն մեր անդամների և նրանց կազմակերպությունների միջև:

Հաստատվել է

Գերազանցությամբ, որը դրևորվում է, երբ մենք ունակություն ենք ցուցաբերում մեր հաջողություններից և ձախողումներից դասեր քաղելու, ամեն օր ինչ-որ նոր բան սովորելու հնարավորությունից օգտվելու և մշտապես հանուն բարեփոխումների ձգտելու համար, և

Քանի որ, SEIU Տեղական 2015 Միությունը մի կազմակերպություն է, որն իր ուժը ստանում է առաջնորդությունից և իր անդամների ակտիվությունից, և

Քանի որ, Արդարություն Բոլորի Համար տեսլականն իրականացնելը, ռասայական և տնտեսական հավասարություն իրականացնելը հնարավոր է միայն մեր բազմազան անդամության և համայնքների առաջնորդների կողմից կազմակերպված շարժում իրականացնելու միջոցով,

Հետևաբար՝ որոշվում է, որ,

1. SEIU Տեղական 2015 Միությունը կնպաստի և կաջակցի այն անդամներին, ովքեր հանձն են առել առաջնորդելու մեր Արդարության Օրակարգն իրենց տարածաշրջաններում, մարզերում, հաստատություններում, ինչպես նաև միության լայն շրջաններում և համապատասխան համայնքներում:
2. SEIU Տեղական 2015 Միությունը առաջնահերթ կարևորություն կտա մեր անդամների և առաջնորդների՝ իրենց միությունը կազմավորելու առաջնորդական ուղղուն՝ կազմակերպելով ուսուցանումներ, տրամադրելով միջոցներ, պրակտիկաներ և փորձառություններ, որոնք կաջակցեն և կգործադրեն նրանց, որպեսզի նրանք հաղթահարեն համակարգային ռասիզմը վերացնելու նպատակը, նպաստեն ներառմանը և ստեղծեն այնպիսի ուժ, որը կպահանջվի սոցիալական և տնտեսական հավասարություն ապահովել մեր բոլոր համայնքներում: